ՆԱԽԱԳԻԾ 06-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 04-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՅՅԱՆ*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն **Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 04-ի նիստի օրակարգը.

1. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 04-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N28-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 131-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 07-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N28-Ա
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.2-րդ մասի «Արարատ մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 3-րդ կետի,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով **Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը համաձայն կից հավելվածի:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Մասիս քաղաքային համայնքի 2013 թվականի հունիսի 14-ի N28-Ա որոշումը:

3. Միավորված նախկին 26 համայնքների կանոնադրությունները օրենքի ուժով համարել ուժը կորցրած 2022 թվականի փետրվարի 25-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, **Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 09-Ա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.4)-րդ կետի պահանջով Մասիս համայնքի ավագանին որոշում է

1. Տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի նստավայրը որոշել՝ ՀՀ Արարատի մարզ, Մասիս քաղաք, Կենտրոնական հրապարակ թիվ 4 հասցեում:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի վարչական ղեկավարների նստավայրերը որոշել՝

ՀՀ Արարատի մարզ, գ. Ազատաշեն, 3-րդ փող. 10/1

ՀՀ Արարատի մարզ, գ. Այնթապ 6-րդ փողոց թիվ 47

ՀՀ Արարատի մարզ, գ. Արբաթ,4րդփողոց ,26շ

ՀՀ Արարատի մարզ, գ.Արգավանդ Կենտրոնական 2-րդ փող., թիվ 5

ՀՀ Արարատի մարզ, գ.Արևաբույր, Արտաշատիխճուղի 14

ՀՀ Արարատի մարզ, գ.Գեղանիստ 8 փող. 4

ՀՀ Արարատի մարզ, գ. Գետափնյա, 2-րդ փող., 17 շ.

ՀՀ Արարատի մարզ, գ. Դաշտավան, Տոնոյան փող., 21 շ.

ՀՀ Արարատի մարզ, Դարակերտ համայնք, Միրզոյանփող., 49 շենք

ՀՀ Արարատի մարզ, գ. Դարբնիկ, Կենտրոնական 8

ՀՀ Արարատի մարզ, գ. Զորակ, Բաղրամյան փող., 40 շենք

ՀՀ Արարատի մարզ, գ. Խաչփար, 7-րդ փող., 6շ.

ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ, Էջմիածնի փող., թիվ 17

ՀՀ Արարատի մարզ գ. Հովտաշատ,Բաղրամյանփողոցթիվ 96

ՀՀ Արարատի մարզ գ. Ղուկասավան, Արամի 29

ՀՀ Արարատի մարզ, գ Մարմարաշեն, Երևան-Արտաշատ խճուղի 57

ՀՀ Արարատի մարզ, գ. Նիզամի, Սայաթնովա 12

ՀՀ Արարատի մարզ, Նոր Խարբերդ Բաղրամյան 10

ՀՀ Արարատի մարզ, Նոր Կյուրին, 1-ին փողոց, 6 շենք

ՀՀ Արարատի մարզ, Նորաբաց համայնք Երևանյան 30

ՀՀ Արարատի մարզ, Նորամարգ, Ազատության փող., 3շ.

ՀՀ Արարատի մարզ, գ.Ջրահովիտ 6-րդ փողոցթիվ 33

ՀՀ Արարատի մարզ, գ. Ռանչպար, 5փ, 9շ

ՀՀ Արարատի մարզ, գ.Սայաթ Նովա, Չարենցի փող., 26 շ.

ՀՀ Արարատի մարզ, գ.Սիս, Մասիսի խճուղու 2-րդ նրբ., 1 շ.

ՀՀ Արարատի մարզ, գ.Սիփանիկ 3-րդ փողոց:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 10-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 131-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. *ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 28-րդ կետերի, 28-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ,,Նվազագույն ամսական աշխատավարձի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի, **Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի կառուցվածքը, աշխատակիցների քանակը,

հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից N1 և N2 հավելվածների:

2. Սահմանել և հաստատել հավելավճար.

ա/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ քաղաքական, հայեցողական, վարչական պաշտոններում աշխատած առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ աշխատած ընդհանուր ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ դրույքաչափի 0,6 տոկոսի չափով,

բ/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ համայնքային ծառայության պաշտոններում աշխատած առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ աշխատած ընդհանուր ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ դրույքաչափի 0,6 տոկոսի չափով

գ/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի /ներառյալ միավորված 26 համայնքներում/ տեխնիկական սպասարկման անձնակազմում աշխատած առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ աշխատած ընդհանուր ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ դրույքաչափի 0,6 տոկոսի չափով:

3. Ուժը կորցրած ճանաչել 2021 թվականի հոկտեմբերի 19-ի ,,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 120-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, թիվ 131-Ա որոշումը:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարին Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

6.Սույն որոշմամբ կարգավորվող՝ քաղաքական, հայեցողական և վարչական պաշտոնների մասով կիրառել կառավարչական հիմնարկը պետական ռեգիստրում գրանցելուց և լիազոր մարմնի կողմից հաստատելուց հետո, իսկ համայնքային ծառայողների և սպասարկող անձնակազմի մասով 2022 թվականի փետրվարի 28-ից:

7.Համայնքի ղեկավարի և համայնքի ղեկավարի տեղակալի /քաղաքապետի տեղակալի/ վարձատրությունը թողնել և վճարել 2021 թվականի հոկտեմբերի 19-ի N 131-Ա ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափով մինչև սույն որոշման 6-րդ կետի կիրառումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի «Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 05-ի ընտրությունների արդյունքներով Մասիս համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 17-Ա որոշումն ու «Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N18 արձանագրությունը **Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները՝

1) ,,Դավիթ Համբարձումյան,, դաշինք

2) ,,Քաղաքացիական պայմանագիր,, կուսակցություն:

2. Հանձնարարել ավագանու խմբակցություններին Մասիս համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնել խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները և ազգանունները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ